

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

NATIONAL ACADEMY OF SCIENCES



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК

OF THE REPUBLIC OF ARMENIA

РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan
Tel.: (+37410) 527081; fax: (+37410) 569281;
e-mail: academy@sci.am

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24
Հեռ. (+37410) 527081, ֆաքս (+37410) 569281,
էլ. փոստ՝ academy@sci.am

0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24
Тел.: (+37410) 527081; факс: (+37410) 569281;
эл. почта: academy@sci.am

№ 24-01/91

«17» 02 2011 թ./յ./ր.

ՀՀ ԳԱԱ-ի Օրգանական և դեղագործական
քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն
Վ.ԹՈՓՈՒԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թոփուզյան

Համաձայն ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության բաժնի վարիչ Ա.Ասատրյանի նամակի /14.02.2011, № 20-0869/ ուղարկում եմ կենտրոնի մի խումբ աշխատակիցների կողմից գրված դիմումի քննության արդյունքում պատրաստված տեղեկանքը, դիմումի հեղինակներին ներկայացնելու համար:

ՀՀ ԳԱԱ-ի նախագահ,
Ակադեմիկոս


Վ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

2010թ.-ի դեկտեմբերի 27-ին և 28-ին կայացած ընտրություններում ՀՀ ԳԱԱ-ի «Քիմիա» մասնագիտության գծով ակադեմիկոսի ընտրությունների վերաբերյալ

Ինչպես հայտնի է ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների և թղթակից անդամների առաջադրումը ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ընդհանուր ժողովներում կազմակերպվում են համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության, «ՀՀ ԳԱԱ-ի իսկական և թղթակից անդամների ընտրության ընթացակարգի»:

2010թ.-ի ՀՀ ԳԱԱ-ի ընտրությունների գործընթացը կատարվել է համաձայն ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ ԳԱԱ անդամների ընտրության կարգի ըստ մասնագիտությունների:

Համաձայն գործող կարգի, ակադեմիկոսների ընտրության դեպքում, բաժանմունքում թեկնածուի առաջադրման ընտրությունը կարող է կայացած համարվել, եթե նրան մասնակցում է տվյալ բաժանմունքի ակադեմիկոսների առնվազն $\frac{3}{4}$ -ը: Ընտրության վերաբերյալ հայտարարությունների հրապարակման պահին «Քիմիայի և երկրի մասին» գիտությունների բաժանմունքի կազմում կար 11 ակադեմիկոս, որոնցից 3-ը բնակվում էին արտասահմանում: Արտասահմանում բնակվող 3 ակադեմիկոսներից մեկի՝ Չուխաջյան Գառնիկի հետ բանակցություն էր տարվում նրա մասնակցությունը ընտրություններին ապահովելու համար (մյուս երկուսը չէին կարող ժամանել Երևան): Այդ դեպքում ընտրություններին կարող էին մասնակցել 9 ակադեմիկոս, որոնցից 5-ը քիմիկոսներ, 4-ը՝ երկրի մասին գիտության ներկայացուցիչներ: Հետևաբար, քվեարկությանը մասնակցող ակադեմիկոսների թիվը (9) ապահովում էր բաժանմունքի անդամ ակադեմիկոսների ընդհանուր թվի (11) $\frac{3}{4}$ -ը:

Սակայն, անսպասելիորեն 2010թ.-ի նոյեմբերի 26-ին վախճանվեց քիմիայի գծով ակադեմիկոս՝ Ստեփան Մացոյանը: Այս հանգամանքը հարցականի տակ դրեց բաժանմունքում քվորումի առկայությունը անգամ ակադեմիկոս Գ.Չուխաջյանի մասնակցության դեպքում (արդյունքում՝ Գ.Չուխաջյանի ժամանումը Երևան դարձավ անիմաստ):

իսկական անդամի ընտրությունների հետ կապված կազմակերպական հարցը և
ելնելով ստեղծված իրավիճակից որոշեց (թիվ 18/1661/).

«Քիմիա» մասնագիտության գծով ՀՀ ԳԱԱ իսկական անդամի ընտրությունները
իրականացնել ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ընդհանուր
ժողովում՝ ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի
«Քիմիա» մասնագիտության գծով Երևանում գտնվող ակադեմիկոսների (Մ.Ինճիկյան,
Ա.Մանթաշյան, Ի.Վարդանյան) մասնակցությամբ:

Առաջարկված տարբերակը հիմնավոր է նրանով, որ նախ, ավանդաբար, մինչև
2006 թվականը «Քիմիա» մասնագիտության գծով ընտրությունները կատարվել են
Բնական գիտությունների բաժանմունքում և վերջապես այս բաժանմունքում զգալի
թիվ են կազմում ակադեմիկոս՝ քիմիկոս կենսաբանները: Հետևաբար այս որոշումը
համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային
ակադեմիայի իսկական և թղթակից անդամների ընտրությունների ընթացակարգի 10-
րդ կետի պահանջներին:

Արդյունքում փակ գաղտնի քվեարկությամբ պահանջվող թվով ձայներ ստացել է
Ա.Շահինյանը, և ներկայացվել ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովի ընտրությանը, մինչ
Ա.Նորավյանին չի հաջողվել ստանալ ձայների պահանջվող 2/3-ը:

Այնուհետև, ՀՀ ԳԱԱ-ի բարձրագույն կառավարման մարմնում՝ ընդհանուր
ժողովում ներկայացվել են վերը նշված հանգամանքները, որոնք առարկության չեն
արժանացել ընդհանուր ժողովի և ոչ մի մասնակիցի կողմից և արդյունքում փակ
գաղտնի քվեարկությամբ ընտրվել է Ա.Շահինյանը:

Ընտրության արդյունքները հաստատվել են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի կողմից
միաձայն:

Վ. Գալստյան
Մ. Բաբայան